ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/184

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.11.2018թ. թիվ 27/26-3/21943-18 գրությամբ «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ՝ 03808571/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գորիսի բժշկական կետրոն» ՓԲԸ-ի 27.11.2018թ. թիվ 353 գրության հիման վրա, 30.11.2018թ. նախաձեռնել է «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Գորիսի բժշկական կետրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գորիսի բժշկական կետրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.11.2018թ. թիվ 353 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Գորիսի բժշկական կետրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռք բերման ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հայտ է ներկայացրել և որոշ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Սահմանված ժամկետում ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ստացվել է տեղեկատվություն, որի համաձայն «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 4,000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է օրենքով նախատեսված շեմը: Մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրում շտկել անհամապատասխանությունը, ինչը տեղի չի ունեցել»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ն 13.12.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Գտնում ենք, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմք առկա չէ, հետևյալ պատճառաբանությամբ.

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, որում մասնավորապես նշված է.

«.... որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վկայակոչված հոդվածի բառացի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ նշված ցուցակում մասնակցին ներգրավելու հիմքերը ներկայացված են բացառապես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, սակայն Ընկերությունը թույլ չի տվել նշված խախտումներից որևէ մեկը, քանի որ դրանք բոլորը վերաբերում են արդեն ընտրված

մասնակցի կողմից թույլ տված խախտումներին, մասնավորապես, եթե ընտրված մասնակիցը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, հրաժարվել է պայմանագիրը կատարելուց, կամ հրաժարվել է գնման գործընթացում հետագա մասնակցությունից: Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է և վերջինիս հետ չի կնքվել պայմանագիր ուստի նա չէր կարող պայմանագրով սահմանված որևէ պարտավորություն խախտել կամ հրաժարվել այն կատարելուց:

Այնինչ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով սահմանվում է, թե որ դեպքերում է մասնակցի հայտը մերժվում, որը որևէ կապ չունի գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակի հետ:

Ընդ որում Ընկերությունը թույլ չի տվել նաև Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 5-րդ կետերի խախտում, հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն դեպքում Ընկերությունը ներկայացրել է հարկային մարմնի առցանց համակարգից տեղեկատվություն, սակայն անկախ իր մեղքից տվյալ համակարգի միջոցով չի արտացոլվել դրոշմանիշային վճարի 4,000 ՀՀ դրամ պարտավորությունը: Ընկերությունը չէր էլ կարող կասկածել դրոշմանիշային վճարի մասով որևէ պարտավորության առկայության մասին, այն դեպքում, երբ ունեցել է հարկային պարտավորությունների մասով գերավճար:

Սկսած սույն թվականի հունվարի 1-ից ՀՀ ՊԵԿ կողմից մշակված էլեկտրոնային հաշվետվությունների հանձնման առցանց հարթակում հարկ վճարողներին տրվել է հնարավորություն՝ այդ թվում «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին ցանկացած պահի, օրվա, ժամի դրությամբ տեսնել, ստուգել, համեմատել, հարկային պարտավորությունների և այլ վճարների վերաբերյալ տեղեկատվությունը: Նշյալ փաստից ելնելով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն 02.11.18թ-ին ներկայացրել է էլեկտրոնային աճուրդի միջոցով թիվ ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հայտ՝ հաշվի առնելով այդ օրվա դրությամբ առկա պարտք չունենալու և առավել ևս հարկատեսակների մասով միասնական հաշվում գերավճար ունենալու հանգամանքը:

Հարկ վճարողի անձնական հաշվի քարտը վերաբերվում է հարկ վճարողի ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկերի, այլ պարտադիր վճարների վերաբերյալ տեղեկատվությանը, որը այս դեպքում բացակայում է: Առկա պարտքը վերաբերվում է

դրոշմանիշային վճարներին, որը համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 7-րդ հոդվածների չի հանդիսանում ՀՀ որևէ հարկատեսակ կամ պարտադիր վճարի տեսակ: Ընդ որում, դրոշմանիշային վճարի վճարումը չի իրականացվում միասնական հաշվեհամարի միջոցով: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընկերությունը սահմանված կարգով ներբեռնել է իր անձնական հաշվի քաղվածքը, իսկ անձնական հաշիվը վարվում է հարկային մարմնի կողմից: Հետևաբար, ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կարող կրել հարկային մարմնի կողմից վարվող հարկային հաշվում անճշտությունների համար:

04.05.2017թ. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 47-րդ կետի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Նույն հավելվածի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Տվյալ դեպքում Ընկերությունը սահմանված ժամկետում վճարումը կատարեուց հետո ներկայացրել է ճշտված քաղվածքը, որի համաձայն որևէ պարտավորություն առկա չի եղել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Մարիամ Ղուլյանը և Զարուհի Հովհաննիսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/184 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2018թ. թիվ 27/26-3/21943-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Գորիսի բժշկական

կետրոն» ՓԲԸ-ի 27.11.2018թ. թիվ 353 գրությունը, «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի 13.12.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը, ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 07.11.2018թ. նիստի թիվ 2, 21.11.2018թ. նիստի թիվ 3 և 23.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը.

««Գորիսի բժշկական կետրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռք բերման նպատակով հայտարարված ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) հայտ է ներկայացրել «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ն՝ 1-ին, 4-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 2-րդ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 07.11.2018թ. նիստի թիվ 2արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Աճուրդի շրջանակներում «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկները կազմել են.

- 1-ին չափաբաժնի մասով՝ 58,448.40 ՀՀ դրամ;
- 4-րդ չափաբաժնի մասով՝ 413,379.60 ՀՀ դրամ;
- 6-րդ չափաբաժնի մասով՝ 95,040.00 ՀՀ դրամ;
- 7-րդ չափաբաժնի մասով՝ 64,152.00 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 3.1 ենթակետով Հանձնաժողովը որոշել է «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ին ճանաչել Աճուրդի առաջին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, իսկ 4-րդ կետով՝ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 02.11.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 4,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

21.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2.2 կետով Հանձնաժողովը որոշել է «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ներկայացված հայտարարությունը որակել իրականությանը չհամապատասխանող և վերջինիս տրամադրել է մեկ աշխատանքային օր՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար:

23.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերությունը չի ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից գրավոր տեղեկատվություն, ներկայացրել է դիմում և անձնական քարտից ներբեռնված քաղվածք և սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունը չի շտկվել:

Նույն արձանագրության 1.2 կետով Ընկերությունը որոշել է «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ տվյալ դեպքում Ընկերությունը հիմք է ընդունել հարկային մարմնի առցանց համակարգում առկա տեղեկատվությունը, սակայն անկախ իր մեղքից տվյալ համակարգի միջոցով չի արտացոլվել դրոշմանիշային վճարի 4,000 ՀՀ դրամ պարտավորությունը: Ընկերությունը չէր կարող ենթադրել դրոշմանիշային վճարի մասով որևէ պարտավորության առկայության մասին, այն դեպքում, երբ ունեցել է հարկային պարտավորությունների մասով գերավճար: Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ Ընկերությունը հնարավորություն ունի ՀՀ ՊԵԿ կողմից մշակված էլեկտրոնային հաշվետվությունների հանձնման առցանց հարթակում ցանկացած օրվա և ժամի դրությամբ հետևելու իր հարկային պարտավորությունների և այլ վճարների վերաբերյալ տեղեկատվությանը: Նշված տեղեկատվությունից ելնելով՝ «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ն 02.11.18թ. ներկայացրել է էլեկտրոնային աճուրդի միջոցով թիվ ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2

ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտ՝ հաշվի առնելով այդ օրվա դրությամբ առկա պարտք չունենալու և միասնական հաշվում գերավճար ունենալու հանգամանքները:

Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ հարկ վճարողի անձնական հաշվի քարտը վերաբերվում է հարկ վճարողի ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկերի և այլ պարտադիր վճարների վերաբերյալ տեղեկատվությանը, որը այս դեպքում բացակայում է, քանի որ առկա պարտքը վերաբերում է դրոշմանիշային վճարներին, որը ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 7-րդ հոդվածների համաձայն չի հանդիսանում ՀՀ որևէ հարկատեսակ կամ պարտադիր վճարի տեսակ: Ընկերությունը Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ մինչև Աճուրդին մասնակցելը սահմանված կարգով ներբեռնել է իր անձնական հաշվի քաղվածքը, որում որևէ նշում չի եղել դրոշմանիշային վճարների մասով առկա պարտավորության մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

.զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՍՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

- 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին

աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 4-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.11 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- 02.11.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը նշված օրվա դրությամբ որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել, իսկ Ընկերության միասնական հաշվում առկա դեբետային մնացորդը կազմել է 1,239,072 ՀՀ դրամ:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 14.12.2018թ. «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 02.11.2018թ. դրությամբ ունեցել է 4,000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով հարկային պարտավորություն, ինչպես նաև 1,239,072 ՀՀ դրամի չափով միասնական հաշվում առկա դեբետային մնացորդ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է

կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նախատեսված չէ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 02.11.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 4,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների

հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարբտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

- 02.11.2018թ. դրությամբ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի 13.11.2018թ. եզրակացության մեջ արձանագրված՝ դրոշմանիշային վճարի գծով 4,000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունն արտացոլված չի եղել:

- Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը հիմք է ընդունել հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությունը, ըստ որի՝ նույն օրվա դրությամբ Ընկերությունը որևէ ժամկետանց պարտավորություն չի ունեցել, իսկ Ընկերության միասնական հաշվում առկա դեբետային մնացորդը կազմել է 1,239,072 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2018թ. թիվ 27/26-3/21943-18 գրությամբ «ՄԵԴԻԿԱԼ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ՝ 03808571/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ